

Ի՞նչ է Առողջարկում CHDP-ն

Սովորական Ֆիզիկական Վիճակի Ստուգումներ.

- ♥ Աճի եւ Չարգացման ստուգում
- ♥ Բոլոր Անհրաժեշտ Պատվաստներ
- ♥ Ատամների Բննություն
- ♥ Տեսողության Բննություն
- ♥ Լսողության Բննություն
- ♥ Մուցման Ստուգում
- ♥ Առողջապահական Կրթություն
- ♥ Ծխախոտի Վերաբերյալ Կրթություն
- ♥ Սակավարյունության (anemia), Արյան մեջ Կապարի, Մեզի, TB-ի, ինչպես նաեւ անհրաժեշտության դեպքում այլ հիվանդությունների քննություն
- ♥ Մինչեւ 5 տարեկան երեխաների համար WIC-ի հանձնարարում

Ատամների Կանոնավոր Ստուգումներ եւ Հաջորդող Խնամք Անհրաժեշտության դեպքում:

Եթե անհրաժեշտ լինի հետագա բժշկական, ատամնային կամ հոգեբուժական ծառայությունների, ապա մենք կօգնենք Ձեզ դրանց գտնելու: Ախտորոշման եւ բուժման ծախսերը կվճարվեն քանի դեռ ձեր երեխան Medi-Cal ունի:

Medi-Cal-ի ծախսերին մասնակցող անհատները կարող են CHDP-ից պահանջել ստուգումների ծախսերը հոգալ եւ կամ կարող եք այդ ստուգումների ծախսերը վճարել ու այդ ծախսերը հետագայում հանել իրենցից պահանջվող գումարից: CHDP-ի ծառայությունների համար մասնակի վճարում չի պահանջվում:

Ձեզ հետ բերեք ձեր Medi-Cal-ի քարտը եւ պատվաստների արձանագրությունները:

Տեղեկություն.

Հավելյալ տեղեկությունների, կամ տեսակցություն եւ փոխադրամիջոց ձեռք բերելու համար դիմեցեք ձեր տեղական CHDP-ի գրասենյակին: Նրանց հեռախոսահամարը դուք կարող եք գտնել ձեր հեռախոսագրքի կառավարական բաժնում: Փնտրեցեք *Child Health and Disability Prevention*-ի կամ *Health Department*-ի վերնագրերի տակ:

Կամ, փնտրեցեք ձեր տեղական CHDP գրասենյակը ինտերնետի հասցեով: www.dhcs.ca.gov/services/chdp

Եթե հոգեբուժական ծառայությունների օգնության կարիք ունեք, հեռաձայնեցեք ձեր շրջանի հոգեբուժական բաժնին: Նրանք կարող են ձեզ հայտնել այլ ծառայությունների մասին, սուր հոգեկան բարդություններ ունեցող երեխաների եւ երիտասարդների համար, որոնք ունեն լիարժեք Medi-Cal:



Edmund G. Brown, Jr.
Կառավարիչ՝ Կալիֆորնիա Նահանգի

(Armenian, 1/04)

Armenian

Երեխաների Առողջապահությունը Եւ Անկարողությունը Կանխարգելող Ծրագիր (CHDP)

Բժշկական եւ Ատամի Առողջապահական Ստուգումներ



ԱՆՎՃԱՐ Մանուկների, Երեխաների եւ Մինչեւ 20 Տարեկան Երիտասարդների Համար Լիարժեք Medi-Cal-ով

Ինչո՞ւ Պետք է Ստուգվել

Ընդհանուր առողջապահական ստուգումը կարող է ի հայտ բերել բժշկական, ատամնային, եւ/կամ հոգեկան առողջական խնդիրներ նախքան նրանց լուրջ բնույթ ստանալը: Կտրվեն անհրաժեշտ պատվաստումներ: Հարցեր տալու համար բավարար ժամանակ կտրամադրվի: Անհրաժեշտության դեպքում, առողջապահական ստուգում կարող է կատարվել խնամակալության, մարմանամարզության կամ ձամբարային պարագաներում: Սովորաբար CHDP-ի ստուգումներ կարող եք ունենալ ձեր առողջապահական խնամքի մատուցման վայրում:

Նորածին Երեխաներ եւ Մանուկներ Ծնունդից Մինչեւ 3 Տարեկան

Նորածին Երեխաների Սովորական Խնամք եւ Պատվաստներ

Նորածինները ու մանուկները կարիքը ունեն հաճախակի առողջապահական ստուգումների: Նրանք պետք է ժամանակին ստանան իրենց պատվաստները:



Ո՞րքան հաճախ

Մեկ քննություն հետեւյալ յուրաքանչյուր տարիքում.

Մինչեւ 1 ամսական	10-12 ամսական
1-2 ամսական	13-15 ամսական
3-4 ամսական	16-23 ամսական
5-6 ամսական	2 տարեկան
7-9 ամսական	3 տարեկան

Դպրոցական Երեխաներ 4-ից Մինչեւ 12 Տարեկան

Ստուգումներ Դպրոցում

Պետական օրենքը պահանջում է որ մանկապարտեզ կամ առաջին դասարան ընդունվող երեխաները ենթարկվեն առողջապահական ստուգման եւ ընդունած լինեն անհրաժեշտ պատվաստները:

Առողջապահական ստուգումները կարող են առողջապահական խնդիրներ հայտնաբերել որոնք կարող են արգելք հանդիսանալ երեխայի ուսումնական առաջադիմությանը:



Ո՞րքան հաճախ

Մեկ քննություն հետեւյալ յուրաքանչյուր տարիքում.

- 4-5 տարեկան հասակում
- 6-8 տարեկան հասակում
- 9-12 տարեկան հասակում

Պատանիներ եւ Երիտասարդ Չափահասներ 13-ից Մինչեւ 20 Տարեկան

Առողջապահական Ստուգումներ

Պատանիները նույնպես ստուգման կարիքը ունեն: Նրանք կարող են հարցեր ունենալ իրենց առողջության վերաբերյալ: Նրանք կարող են հարցնել առողջապահական խնամք ապահովող բժիշկին:



Ո՞րքան հաճախ

Մեկ քննություն հետեւյալ յուրաքանչյուր տարիքում.

- 13-16 տարեկան հասակում
- 17-20 տարեկան հասակում

Պատանիների համար այլ ծառայությունների համար հարցրեք ձեր բժշկին կամ տեղական առողջապահական բաժնին: